# „ԱՐՓԻ"

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ

*Պոլսում Հայաստանի բարենորոգումների ծրագրի մշակումը յանձնուած է մի առանձին յանձնաժողովի, որի մէջ մտել են մեծ պետութիւնների հետևեալ ներկայացուցիչները. Ռուսիայի—Թարգման Մանդէլշտամ, Իտալիայի — Տաբեր, Աւստրիայի — Պանֆիլի, Գերմանիայի—Շենրբերգ, Անգլիայի—Ֆիցմորիս և Ֆրանցիայի — Սենկ Վենտեն։*

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԴԻՄՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

*Ամերիկահայ յանձնախումբը հետևեալ հեռագիրն է ուղղել Պետերբուրգ մինիստրների խորհրդի նախագահին և արտաքին գործերի մինիստրին.*

*«Ամերիկայի և կանադայի հայերը ամենախոնարհ յարգանքով իրենց ցանկութիւններն ու խղձերն են մատուցանում ձերդ գերազանցութեան, որպէս զի վեհաժողովը, որ արևելեան հարցի բաղդը պիտի որոշէ, գրաւուի Թիւրքիայի հայոց դրութեամբ և դրական պաշտպանութիւն երաշխաւորէ նրանց պատուի, կեանքի և գոյքի հա-*

## ՀԱՅՈՑ ՏԱՌԵՐԻ 1500 ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ



Ս. Մեսրոպ Մաշտոց

*Հայոց գրերի գտնողը, մի ժամանակ պալատական պաշտօն ունէր, իսկ յետոյ վարդապետ դարձաւ և 404—406 թ. գտաւ հայոց այբուբէնը։*



Ս. Սահակ հայրապետ

*Առաջին անգամ հայ գրերի ծաւալողը, որ Ե. դարում իբրև մեծ հայրենասէր գործեց թէ մտաւոր և թէ քաղաքական կեանքում։*

—